ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. մայիսի 29-ից 30-ը Ալմաթի (Ղազախստանի Հանրապետություն) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**

   Ռուզաննա Այվազյան

2. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ</u>**

   Ղազախստանի Հանրապետություն, ք. Ալմաթի, 2024թ. մայիսի 29-ից 30-ը

3. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

   ՄԱԿ-ի Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովը (UNESCAP)

4. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**

   «Քաղաքային տրանսպորտային համակարգերի ինտեգրումը և թվային տեխնոլոգիաների կիրառումը» խորագրով տարածաշրջանային հանդիպմանը մասնակցություն

5. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ</u>**

   Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրներում քաղաքային տրանսպորտային համակարգերի ինտեգրումը և հասարակական տրանսպորտի կազմակերպման գործընթացում թվային տեխնոլոգիաների կիրառումը, տարածաշրջանային երկրների փորձը, Ալմաթի քաղաքում հասարակական տրանսպորտի կազմակերպման գործընթացում կիրառված թվային տեխնոլոգիաները և արձանագրված արդյունքները:

6. **<u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**

   Մասնակցություն տարածաշրջանային երկօրյա հանդիպմանը, մասնակցություն Ալմաթի քաղաքային իշխանությունների կողմից կազմակերպված էլեկտրոնային երթակարգավարական ծառայության գործունեությանը, ծանոթություն Ալմաթիի մետրոպոլիտենի աշխատանքին:

   Իմ կողմից ներկայացվել է զեկույց սահիկաշարով «Քաղաքային հասարակական տրանսպորտի համակարգերի ինտեգրումը և թվային տեխնոլոգիաների կիրառումը Հայաստանում» թեմայով:

7. **<u>ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ</u>**

Հանդիպման ընթացքում ուսումնասիրվել է տարբեր երկրների և առանձին քաղաքների հասարակական տրանսպորտի կազմակերպման և պլանավորման գործընթացը տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով իրականացնելու, ոլորտում մատուցվող ծառայությունները թվայնացնելու փորձը:
Հանդիպման արդյունքների վերաբերյալ քարտուղարության կողմից կազմված հաշվետվությունը հրապարակվել է UNESCAP-ի պաշտոնական էջում:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հանդիպման արդյունքում հնարավորություն եղավ ուսումնասիրելու տրանսպորտի ոլորտում թվային տեխնոլոգիաների կիրառման միջազգային լավագույն փորձը և հանրապետությունում կանոնավոր ուղևորափոխադրումների ոլորտում ներկայումս իրականացվող բարեփոխումների շրջանակներում հնարավորինս կիրառելու այն:
Հանդիպման ընթացքում պատշաճ մակարդակով ներկայացվեց Հայաստանում իրականացվող թվային բարեփոխումների և հասարակական տրանսպորտի ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման արդյունքները:

9. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱՄՍԱԹԻՎ

05.06.2024թ.